

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**Պատմության օլիմպիադայի մարզային փուլ (2019-2020 ուստարի)**  
**10-րդ դասարան (տևողությունը՝ 150 րոպե)**

Սիրելի՛ աշակերտ, պատմության օլիմպիադայի հանրապետական փուլում նախատեսված են նոր տիպի մի քանի առաջադրանքներ, օրինակ՝ աշխատանք ուրվագծային քարտեզի, նկարի, սկզբնաղբյուրի կամ գծապատկերի հետ, որոնք ուսումնական ծրագրի պարզօրինակ վերարտադրության փոխարեն պահանջելու են աշակերտի վերլուծական որոշ հմտություններ:

**ա) Հայոց պատմություն (15 միավոր)**

1. Ո՞ր լեռներից է սկիզբ առնում Արածանի գետը. 0,5 մ.  
 ա/ Ծաղկավետ բ/ Ծաղկանց  
 գ/ Սրմանց դ/ Մասիուս
2. Ո՞ր ժամանակաշրջանին է վերաբերում Մեծամորի աստղադիտարանը. 0,5 մ.  
 ա/ Ք.ա. 3200-3000 թթ. բ/ Ք.ա. 3000-2800 թթ.  
 գ/ Ք.ա. 2800-2600 թթ. դ/ Ք.ա. 2600-2400 թթ.
3. Ք.ա. IX դարում Ասորեստանի արձանագրություններում հիշատակվում են «Նաիրի երկրում ... քաղաք՝ իրենց զորավոր պարիսպներով» (նշե՛ք թվաքանակը). 0,5 մ.  
 ա/ 300 բ/ 250  
 գ/ 200 դ/ 150
4. Վանի թագավորության վերջին հստակ թվագրվող արքան էր՝ 0,5 մ.  
 ա/ Ռուսա II բ/ Արգիշտի II  
 գ/ Սարգուրի III դ/ Ռուսա III
5. Մեզ հասած առաջին արքայական դրամները հատվել են՝ 0,5 մ.  
 ա/ Կոմմագենեի Սամոսատ մայրաքաղաքում բ/ Ծովքի Արշամաշատ քաղաքում  
 գ/ Մեծ Հայքի Երվանդաշատ մայրաքաղաքում դ/ Մեծ Հայքի Արտաշատ մայրաքաղաքում
6. Ո՞ր քաղաքում գերի վերցվեց Սելևկյանների Սելենե թագուհին. 0,5 մ.  
 ա/ Անտիոք բ/ Տյուրոս  
 գ/ Բերիթ դ/ Պտղոմայիս
7. Ովքե՞ր էին առաջնորդում աշխարհագրային զորամասերը Երվանդունիների բանակում.  
 ա/ սպարապետները բ/ բղեշխները 0,5 մ.  
 գ/ գավառակալ իշխանները դ/ մաղխազները
8. Ո՞ւմ են պատկանում «կամուրջներ չհանդուրժող Արաքս» խոսքերը. 0,5 մ.  
 ա/ Տակիտոս բ/ Արիանոս  
 գ/ Վերգիլիոս դ/ Պլուտարքոս
9. Ե՞րբ է առաջին անգամ գահակալել Տիգրան IV-ը: 0,5 մ.
10. Ո՞վ է եղել Կյուրոս Մեծի տերության արևմտյան կեսի փոխարքան: 0,5 մ.
11. Ք.ա. XVI դարում Հայաստանի հարավում և Միջագետքի հյուսիսում ստեղծվեց Միտաննի թագավորությունը՝ ... մայրաքաղաքով (նշե՛ք մայրաքաղաքի անունը). 0,5 մ.
12. Որտե՞ղ է դավադրաբար սպանվել Արտաշես II-ը: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)  
 ա/ Փոքր Հայքի անկախացումը Միթրաուստեսի գլխավորությամբ  
 բ/ Երվանդ III-ի դառնալը Հայաստանի սատրապ  
 գ/ Զորավար Վահումիսայի և հայերի ընդհարումը Հյուսիսային Միջագետքում  
 դ/ Երվանդ Սակավակյացի գահակալության սկիզբը  
 ե/ Երվանդ II-ի գլխավորած ապստամբությունը Աքեմենյան տերության դեմ

զ/ Հունական 10-հազարանոց բանակի նահանջը Հայաստանի տարածքով  
 է/ Կյուրոս Մեծի ապստամբությունը Մարաստանի դեմ  
 ը/ Գավգամելայի ճակատամարտը

1	2	3	4	5	6	7	8

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր.

1,5 մ. (6 X 0,25 մ.)

1. Երվանդ IV
2. Տիգրան III
3. Արտավազդ I
4. Արտաքսերքսես II
5. Տրդատ I
6. Սարասար

- |                     |             |                   |
|---------------------|-------------|-------------------|
| ա. Բակուր Արշակունի | բ. Տիգրան I | գ. Ադրամելեք      |
| դ. Արտավազդ III     | ե. Երվազ    | զ. Կյուրոս Կրտսեր |

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները:

1,5 մ. (3 X 0,5 մ.)

- ա/ Հայաստանի տարածքով անցնող միջազգային առևտրական ուղիները բարեկարգելու նպատակով Ներոն կայսրը Տրդատին մեծ գումար և արհեստավորներ է տալիս:
- բ/ Վաղարշի հարձակումը սպառնում էր հռոմեական Կապադովկիա նահանգին, ուստի Կորբուլոնը Ներոնին խնդրեց իր փոխարեն Հայաստան ուղարկել մեկ այլ զորավարի:
- գ/ Վաղարշ II-ից հետո Հայաստանի թագավոր նշանակված Սոհեմոս-Տիգրանը դուրս է վտարվում Հայաստանից, քանի որ Հռոմը պարթևներին մեղադրում էր Հռանդեայի պայմանագիրը խախտելու համար:
- դ/ Ավերված Արտաշատը վերականգնելու համար Ներոն կայսրը Տրդատին մեծ գումար և արհեստավորներ է տալիս:
- ե/ Պարտված Պարսկաստանը հաշտություն էր խնդրել, ուստի Հռոմը համաձայնեց նրա հետ կնքել Մծբինի 40-ամյա հաշտության պայմանագիրը:
- զ/ Քանի որ Վաղարշի հարձակումը սպառնում էր հռոմեական Սիրիա (Ասորիք) նահանգին, որի կառավարիչը Կորբուլոնն էր, ուստի վերջինս Ներոնին խնդրեց իր փոխարեն Հայաստան ուղարկել մեկ այլ զորավարի:
- է/ Գառնիի ամրոցը կառուցապատելու և Արեգ-Միհրի տաճարը կառուցելու համար Ներոն կայսրը Տրդատին մեծ գումար և արհեստավորներ է տալիս:
- ը/ Քանի որ պարթևների հետ նախորդ բախման ժամանակ Կորբուլոնը վիրավորվել էր ու վատառողջ էր, ուստի վերջինս Նիգեդին խնդրեց իր փոխարեն Հայաստան ուղարկել մեկ այլ զորավարի:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները:

1 մ. (2 X 0,5 մ.)

- ա/ *Ոգեպաշտություն* – հավատ ինքնուրույն գործող (ոգիներ) կամ մարմնի մեջ ամփոփված (հոգիներ) գերբնական էակների նկատմամբ:
- բ/ *Թեոկրատական (աստվածապետական) երկիր* – պետություն, որտեղ տիրակալի՝ արքայի անձն աստվածացված էր, և նրա անձի պաշտամունքը պարտադիր էր բոլոր հպատակների համար:
- գ/ *Մարզպան* – Հայաստանի արևմտյան մասի կառավարիչը Աքեմենյան տիրապետության օրոք:

- դ/ Վիշապներ – ձկնակերպ քարակոթողներ Հայկական լեռնաշխարհում:
- ե/ Ստրապեգոս – սահմանակալ նահանգի կառավարիչ Արտաշես I-ի օրոք:
- զ/ Շահապ – արքունի թիկնապահության պետ:
- է/ Մաղխազ – մայրաքաղաքի քաղաքային խորհրդի ղեկավար:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
- ա/ Արգիշտի I-ի օրոք Վանի թագավորությունը (Բիայնիլի-Ուրարտու-Արարատ) հասավ աննախադեպ հաջողությունների՝ վերածվելով Առաջավոր Ասիայի հզորագույն ուժի:
  - բ/ Ք.ա. 830-ական թթ. Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևմտյան շրջաններում կազմավորվել էր էթիունի երկրի համադաշնությունը:
  - գ/ Ռուսա III-ի իշխանության շրջանից մեզ հասած արձանագրությունները հայտնաբերվել են Արարատյան դաշտի և Վանա լճի արևելյան շրջանների հնավայրերից:
  - դ/ Վանի թագավորության գործի գերագույն հրամանատարը առաջին սպարապետն էր:
  - ե/ Վանի թագավորության հզորացման և տարածաշրջանում նշանակալի տերություն դառնալու գործում կարևոր դեր խաղացին Իշպուհինի և Մենուայի կատարած բարեփոխումները:
  - զ/ Մենուայի առաջին քայլերից մեկն էր Հայկական պար լեռնաշղթայի արևելյան հատվածում ամրապնդվելը, որի նվաճումից հետո էլ Արաքսի աջ ափին հիմնադրվում է ռազմավարական խոշոր հենակետ Մենուախինիլի քաղաքը:
  - է/ Բիայնիլի-Ուրարտուի վերջին ականավոր տիրակալը դարձավ Ռուսա II-ը՝ Ռուսա I-ի որդին:
  - ը/ Սարդուրի II-ի որդի Ռուսա I-ը, թեև գահ բարձրացավ դժվարին մի ժամանակաշրջանում, բայց կարողացավ իրականացնել պետական համակարգի և բանակի բարեփոխումներ:

1	2	3

18. Գտե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ.
- Հայկական լեռնաշխարհի՝ արևի հանգրվանը լինելու մասին պատկերացումը պահպանվել է նաև խեթական աղբյուրներում, որոնց համաձայն՝ արեգակը ծագում է «Արևելյան ծովից»՝ Ուրմիա լճից:*
- Ուղղում. ոչ թե՛ \_\_\_\_\_ (նշե՛ք սխալը, 0,5 մ.), այլ՝ \_\_\_\_\_ (նշե՛ք ճիշտը, 0,5 մ.):
19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
- «Այժմ ես կպատմեմ այն մասին, ինչն ինձ այս քաղաքից հետո թվում է ամենազարմանալին: Նավերը, որոնցով նավարկում են գետնի վար՝ դեպի ..., կտրո են և ամբողջովին կաշեպատ: ...-ում, որը Ասորեստանից վերև է, նրանք կտրում են ուռենիներ, որոնցով պատրաստում են նավի կողերը և դրանք պատում կավե ծածկով, նավի հատակի նման»:*
- ա. Ո՞ր պատմիչի աշխատությունից է մեջբերումը:
  - բ. Ո՞ր քաղաքի մասին է խոսքը:
  - գ. Որտեղի՞ց էին նավարկում նավերը:

**բ) Համաշխարհային պատմություն (5 միավոր)**

1. Եգիպտական ո՞ր փարավոնը կատարեց կրոնական բարեփոխում և իրեն կոչեց Էխնաթոն.
  - ա/ Ամենհոտեպ IV բ/ Թուֆնու III 0,5 մ.
  - գ/ Ռամզես II դ/ Յահմոս I
2. Կյուրոս II Մեծը հաղթեց մարերին և գրավեց նրանց մայրաքաղաքը. 0,5 մ.
  - ա/ Մեմֆիսը բ/ Էկբատանը
  - գ/ Էլամը դ/ Դամասկոսը

3. Շումերական ո՛ր քաղաք-պետության արքան էր Գիլգամեշը. 0,5 մ.  
 ա/ Քիշ ր/ Ուր  
 գ/ Ուրուկ դ/ Լագաշ
4. Ո՛ւմ օրոք Աքքադի թագավորությունը հասավ իր հզորության բարձրակետին. 0,5 մ.  
 ա/ Սարգոն ր/ Մինա  
 գ/ Սալմանասար I դ/ Նարամսին
5. Ինչպե՛ս է կոչվում Ք.ա. XXI դարում սկսված և շուրջ երեք դար տևած Եգիպտոսի նոր վերելքի ժամանակաշրջանը. 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)
1. Արքայական իշխանության տապալումը Հռոմում  
 2. Կինոսկեֆալեի ճակատամարտը  
 3. Պունիկյան առաջին պատերազմի ավարտը  
 4. Կ.Սուլլայի կողմից Հռոմի գրավումը
- ա.Ք.ա. 83 թ. ք.Ք.ա. 241 թթ. գ.Ք.ա. 510 թ. դ.Ք.ա. 197 թ.

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
- ա/ Ք.ա. XVII դ. Մուրսիլիս I-ը մայրաքաղաքը փոխադրեց Խաթթուսաս, որն այդուհետև դարձավ Խեթական պետության մշտական մայրաքաղաքը:
- բ/ Թուկուլթի-Նինուրտա I-ի իշխանության տարիներին (Ք.ա. 1233-1197 թթ.) Ասորեստանի զորքերն արշավեցին Հյուսիսային Սիրիա, որտեղից բերեցին հարուստ ռազմավար և հազարավոր գերիներ:
- գ/ Կյուրոս II Մեծին հաջորդեց նրա որդին՝ Բարդիան, որի օրոք Պարսից զորքերը Ք.ա. 525 թ. գրավեցին Ստորին Եգիպտոսը:
- դ/ Սոլոնը Ք.ա. 594 թ. վերացրեց պարտային ստրկությունը. նույնիսկ Ատտիկայից դուրս ստրկության վաճառված աթենացիները պետական միջոցների հաշվին հետ գնվեցին և վերադարձվեցին:
- ե/ Հռոմի գերագույն օրենսդիր մարմինը ժողովրդական ժողովն էր՝ մագիստրատուրան:
- զ/ Ք.ա. 338 թ. Բեոտիայի Քերոնեա բնակավայրի մոտ տեղի ունեցած ճակատամարտում մակեդոնացիները հաջողության հասան. հունական պոլիսների նվաճումը ամրագրվեց Ք.ա. 337 թ. Աթենքում հավաքված համահունական վեհաժողովում:
- է/ 451 թ. Գալլիայում՝ Կատալաունյան դաշտում, հռոմեական-գերմանական-գալլական բանակը պարտության մատնեց հոներիին:

1	2	3

Հանրապետական օլիմպիադայի հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

06.02.2020 թ.